Աղբիւրի յաւելուած.

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 19 կիրակի 25 մայիսի | ութերորդ տարի 1897

ԾԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրէմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր ֆոտտո-գրաւիւր պատկերը, 2) *Մայրիկի անձրեւում, մի շաքել խրոմօ*, 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարեմի աղջիկը*, 4) *Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդաներ, բացատրութիւններով:*

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահման 4 ր.կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (արտասահման 10 ր. կամ 30 ֆր.), ամսական *Տարազը* 50 կ. *Աղբիւրը*—25 կ. *պրեմիաները ստանում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի:*

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Тараз *կամ* Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Հայկական ապարանիճ Երեւանում:

ԹԷՈԴՈՐԱ

Պատմական վէպ Ի. Ֆիօրենտինեի

*(Շարունակութիւն *)*

XXXIII

ՖԱՅՈՆ

Մինչեւ որ Բելիզարիոսը կը հասնէր պարսկական սահմաններին, կայսերական զօրքերը արդէն յետ էին քաշուել, սարսափելով Թշնամու ոյժից: Բայց հռչակաւոր ժեներալը իսկոյն առաջ դիմեց և պաշարեց Սիզէրան քաղաքը: Բելիզարիոսի հետ էր նաև իր խորթ-որդի Ֆացիոն, որ երբեմնակի տեղեկութիւններ էր ստանում Կոստանդնուպոլսից իր մօր վարած կեանքի մասին: Ինչպէս մեզ յայտնի է, խելացի Ֆացիոն արդէն նկատել էր այն օտարոտի յարաբերութիւնները, որ գոյութիւն ունէին Անտոնինայի և Թէոդոզիոյի մէջ: Նա վաղուց դիտաւորութիւն ունէր բանալ Բելիզարիոսի աչքերը, բայց զսպում էր իրան, չըցանկանալով ամբաստանել Հարազատ մօրը:

Միևնոյն ժամանակ Անտոնինան նրա մէջ տեսաւ ամենասարսափելի Թշնամուն՝ իր շահերի վերաբերմամբ: Պառանալով մայրական զգացմունքը, նա իրանից կախած բոլոր միջոցներով աշխատում էր վայր ձգել Ֆացիոյին իր ամուսնու առաջ: Բացի այն, որ ինքը ամբաստանական նամակներ էր գրում Բելիզարիոսին Ֆացիոյի մասին, նա դեռ խնդրեց իր ամուսնու ստորադրեալներին անւանարկել Ֆացիոյին ժեներալի առաջ: Մօր այդ մտածութիւնները յայտնի էին երիտասարդին և սաստիկ շփոթում էին նրան: Նա վճռեց վստահ քայլ անել: Նա գրեց Կոստանդնուպոլիս իր երկու բարեկամին, որոնք վկայ էին եղել Անտոնինայի անարժան վարքին, գալ բանակը և յայտնել ճշմարտութիւնը ժեներալ Բելիզարիոսին: Բարեկամները կատարեցին Ֆացիոյի խնդիրը: Գալով Կոստանդնուպոլսից պարսկական բանակը, նրանք կատարեալ համարձակութեամբ յայտնեցին ժեներալին իր կնոջ վարքի մասին:

Բելիզարիոսը սաստիկ կատաղեց: Նա երդւեց վրէժխնդիր լինել դաւաճան կնոջից և նրա սիրահարից և ախոռաց մխիթարեց նրա մասին, որ չըկարողացաւ խլոյն կատարել իր դիտաւորութիւնը: Մենակ մնալով Ֆացիոյի հետ, նա ողբալով ընկաւ նրա պարանոցով և աղաղակեց.

—Օ՜, իմ սիրելի Ֆացիո, իմ թանդագին զաւակ և բարեկամ, դու միայն կարող ես օգնել ինձ մաքրելու այն սարսափելի արատը, որ ընկել է մեր ամբողջ տոհմի վրայ: Լսիր ինձ, Ֆացիո, ես ուզում եմ ամեն բան համարձակ խոստովանել քեզ: Դժբախտաբար դեպի դաւաճան կինն ունեցած սէրը չէ հանգել իմ սրտի մէջ, և այդ զգացմունքն է, որ չի թոյլ տալիս ինձ շաղախել ձեռքերս արեան մէջ... ես կըմտածեմ, թէ ինչ անել նրան: Բայց Թէոդոզիոն պէտք է իր կեանքով պատասխանատու լինի իր յանցանքի համար: Ասա ինձ, խնդրեմ, կարո՞ղ եմ յոյս դնել քեզ վրայ:

—Ահա քեզ ձեռքս, սիրտս և ամբողջ կեանքս, — պատասխանեց Ֆացիոն: — Ընտրելով ինձ վրէժխնդիր լինելու մեր ընդհանուր խայտառակութեան համար, դու ապացուցանում ես սէր և բարեկամութիւն դէպի ինձ: Մեկ բանից ես կասկածում եմ, ներիր ինձ, Բելիզարիոս:

—Ի՞նչու մասին:

—Քեզ վրայ, բարեկամս: Դու չափազանց սիրում ես կնոջդ և այդ սէրը յաճախ քեզ կուրացնում է: Ես վախենում եմ, որ երբ տեսնես դու մօրս, կըմոռանաս վրէժխնդրութեան զգացմունքը և ես բարեկամ դառնալու փոխարէն՝ քո Թշնամին կըլինիմ:

—Օ՜, ո՛չ, այդ երբէք չի լինիլ — ասաց Բելիզարիոսը:

—Լա՛ւ, ես քեզ հաւատում եմ, —պատասխանեց Ֆացիոն, —բայց դու պէտք է երդւես իմ առաջ, որ հաւատարիմ կըմնաս դիտաւորութիւններիդ. ես իմ կողմից պատրաստ եմ միևնոյնը անել:

—Համաձայն եմ, բարեկամս, —պատասխանեց Բելիզարիոսը, գգւելով Ֆացիոյին:

Հետևեալ օրը ժեներալը և իր որդին երդման խորհուրդ կատարեցին. նրանք ներկայ եղան պատարագին, հաղորդութիւն առան, կտրելով սուրբ նշխարը և միևնոյն ամանից խմեցին կարմիր գինին, որ ներկայացնում էր Փրկչի արիւնը: Այս երդման խորհրդից յետոյ նրանց կեանքի նպատակը պէտք է միևնոյնը լինէր: Նրանք սկսեցին մտածել, թէ ինչ ճանապարհով վրէժ առնել Թէոդոզիոյից: Ինչ Կոստանդնուպոլսից և ձերբակալել նրան՝ դժւար և վտանգաւոր էր, որովհետև Անտոնինային պաշտպանում էր Թէոդորա կայսրուհին: Բարեկամները վճռեցին սպասել բարեյաջող րոպէի:

Մինչեւ որ Բելիզարիոսը և Ֆացիոն մտածում էին վրէժխնդրութեան ձևի մասին, Անտոնինայից նամակ ստացւեց, որի մէջ յայտնում էր իր ամուսնուն, որ մի քանի օրից յետոյ դիտաւորութիւն ունի ժամանել շանակը: Միաժամանակ այդ նամակի հետ Ֆացիոն տեղեկութիւն ստացաւ, որ Թէոդոզիոն ուղևոր-

*) Տես Տարազ № 18.

ւել է Կոստանդնուպոլսից Էֆէզո։ Եւ իրօք Անտոնինայի սիրահարը, լսելով, որ ժեներալ Բելիզարիոսը մտադիր է վերադառնալ, և գալով Կոստանդնուպոլիս, ի հարկէ կիմանայ իր կնոջ վարքի մասին, վախեցաւ և համոզեց Անտոնինային գնալ բանակը ամուսնու մօտ, իսկ ինքը ուղևորւեց Էֆէզո։ Անտոնինան Հիմնաւոր դատ Թէոդողիոյի ասածները և բաժանւեցաւ նրանից։

Երբ Բելիզարիոսը լուր ստացաւ, որ իր ամուսինը մօտենում է Հայաստանի սահմաններին, նրա սիրտը սկսեց ալեկոծւել. սէր, նախանձ, վիրաւորւած պատիւ, դաւաճան կնոջը վրէժխնդիր լինելու ցանկութիւն—բոլորը խառնւեցան միասին և սաստիկ յուզում էին սիրահարւած ամուսնու սիրտը։ Այն ինչ այդ ժամանակ պատերազմը արդէն վերջանալու վրայ էր։ Նիզիբիի մօտ պարսից զօրքը ոչնչացնելուց յետոյ, մնում էր միայն վերջին հարւած տալ Թշնամուն, յանկարծ ժեներալ Բելիզարիոսը հրաման արձակեց յետ դառնալ, իսկ ինքը ուղևորւեց իր կնոջը դիմաւորելու։ Թաղցնելով իր մէջ սիրոյ զգացմունքը դէպի Անտոնինան, ժեներալը հրամայեց ձերբակալել նրան, ինչպէս հասարակ յանցագործ կնոջ։ Դա մի անսպասելի և սարսափելի հարւած էր փառասէր Անտոնինայի համար։ Միևնոյն ժամանակ Փացիօն ուղևորւեց Էֆէզո Թէոդողիոյի հետքերով։

Գալով այդ քաղաքը, երիտասարդը աշխատում էր թագցնել ամենքից իր դիտաւորութիւնները, բայց այդ նրան չյաջողւեցաւ։ Թէոդողիոն իսկոյն հասկացաւ Փացիոյի գալու պատճառը և շտապեց Թագնւելու ս. Յովհաննու եկեղեցում։ Թէոդողիոյին այնտեղից դուրս տանելու համար պէտք է եպիսկոպոսի թոյլտւութիւնը լինէր։ Փացիոն մի այնպիսի միջոց գործ դրեց, որ իրական էր բոլոր դարերում. նա մեծ գումար տւեց եպիսկոպոսին և թոյլտւութիւն ստացաւ Թէոդողիոյին ձերբակալելու։ Բելիզարիոսը հրամայեց բերել Թէոդողիոյին իր մօտ և Անտոնինայի փաթօրիտը, ուժեղ հսկողութեան տակ, ուղարկեցաւ բանակ ժեներալի մօտ։ Ճանապարհին Փացիոյի մօտ մարդ եկաւ Բելիզարիոսից, յայտնելով նրան, որ կայսերական հրաման է ստացել անյապաղ դալ Կոստանդնուպոլիս։ Այդ հանգամանքը ստիպեց Փացիոյին թողնել գերեալին բանտում, ժեներալ Բելիզարիոսին հաւատարիմ զինուորների հսկողութեան տակ։

Ժեներալի ստացած անսպասելի հրամանը Անտոնինայի կողմից Թէոդորային ուղարկած նամակի հետևանքն էր։ Բելիզարիոսի կինը Թէսպէտև հսկողութեան տակ էր, բայց և այնպէս կարողացաւ յայտնել կայսրուհուն իր դրութեան մասին և խնդրել նրա պաշտպանութիւնը։ Կայսերական հրովարտակով հրամայւում էր գալ մայրաքաղաք իր ամուսին Անտոնինայի հետ։ Կոստանդնուպոլսում Բելիզարիոսը չէր կարող ձերբակալած պահել իր կնոջը։ Ինքը կայսրը նկատեց ժեներալին, որ այդ տեսակ վարմունքը կնոջ հետ կարող է վատ տպաւորութիւն թողնել քաղաքացիների վրայ։ Սիրահարւած Բելիզարիոսը ի հարկէ չըհակառակւեց կայսեր ցանկութեանը և կատարեալ ազատութիւն տւեց իր ամուսնուն։

Մի քանի օրից յետոյ եկաւ Կոստանդնուպոլիս նաև Փացիոն, բայց կայսրուհի Թէոդորայի հրամանով իսկոյն ձերբակալւեց և բանտարկւեցաւ։ Թէոդորան ուզում էր շնորհակալութիւն յայտնել իր բարեկամուհի Անտոնինային, որ այնպէս հմուտ կերպով կարողացաւ յաջողեցնել նախարար դի-Կապադոչիոյի սպանութիւնը։ Կայսրուհի Թէոդորան,—ասում է պատմաբան Պրոկոպիոսը—ուզում էր շնորհակալութիւն յայտնել այն արեան համար, որ թափւել է Անտոնինայի խարդախութիւնների շնորհիւ, նոյնպէս un ricambio di sangue արիւնով։ Անտոնինան յայտնեց կայսրուհուն, որ Փացիօն ձերբակալել է Թէոդողիոյին Էֆէզոյում, բայց ուր է ուղարկել այն տեղից նրան, իրան յայտնի չէ։ Թէոդորան հրամայեց արձակել ենթարկել Փացիոյին տանջանքի, բայց և այս միջոցը չօգնեց. երիտասարդ կալանաւորը հերոսաբար տարաւ բոլոր չարչարանքները և չըյայտնեց դաղտնիքը։ Զարմանալին այն է, որ Թէոդորայի այս կարգադրութեան մասին յայտնի էր Փացիոյի մօրը։ Անտոնինան դիտէր, որ իր որդին ձերբակալւած է կայսրուհի Թէոդորայի բանտում։ Նա ամուսարբեր լինելով դէպի որդու տանջանքները, հոգում էր միայն իր սիրած Թէոդողիոյի մասին։ Ոչ մի տեղեկութիւն չըստանալով Փացիոյից, թէ որտեղ է գտնւում Թէոդողիոն, կայսրուհին պիտեց ուրիշ միջոցի. նա ուղարկեց ամենուրեք իր լրտեսներին, որոնք գտան ձերբակալւած Թէոդողիոյին և բերին նրան Կոստանդնուպոլիս։ Թէոդորան ուզում էր սիւրպրիզ անել Անտոնինային։ Թագցնելով իր սենեակում վարագոյրի յետև Թէոդողիոյին, նա հրամայեց կանչել իր մօտ Անտոնինային և ասպա դարձաւ դէպի նա այս խօսքերով.

—Գիտէս, բարեկամս, ես թանգագին աւար եմ ստացել, չէս ցանկանում արդեօք տեսնել այն, և այս խօսքերով Թէոդորան դուրս բերեց վարագոյրի հետևից Թէոդողիոյին։

Առաջին անդամ տեսնելով իր սիրելիին, Անտոնինան քարացաւ, յետոյ ուրախութեան աղաղակ դուրս թռաւ նրա կրծքից և նա ընկաւ Թէոդողիոյի

Իտալական կեանքից. — Գյուղի տավարեղներից.

վրայ ու զգուեց նրան: Նրա գոհունակութիւնը անսահման էր: Այդպիսով Անտոնինան տեսնում էր իր երկրպագած Թէոդոլիոլին պալատի սենեակներից մէկում, որի տակ խոնաւ և մռայլ սենեակի մէջ տանջւում էր իր որդի Ֆացիոն: Բայց նա մենակ չէր նստած բանտում: Բելիզարիոսի բոլոր բարեկամները և ազգականները, որոնք յայտնել էին իրան Անտոնինայի վարքի մասին, նոյնպէս այնտեղ էին: Նամանաւանդ տանջւեց Ֆացիոլի ընկերներից մէկը, որ ձերբակալել էր Թէոդոլիոլին Էֆէզոյում: Դրժբախտին նստացրին մութ և հոտած փոսի մէջ առանց լոյսի և օդի, մեխեցին պարանոցը պատին, այնպէս որ նա չէր կարող շարժւել ու մի քանի օրից յետոյ մեռաւ: Ֆացիոլին էլ նոյն վիճակն էր սպասում, բայց մի հանգամանք պատահեց, որ ինքը բոլորովին չէր սպասում:

Կ. Մարտիրոսեանց

(Կըշարունակուի)

ԹԱՄԱՐ

(Լերմոնտովից)

Գարիալ կրճի նեղ փապարներում,
Որտից աղմուկով Տերէքն է հոսում,
Այնտեղ, սև ամրոցն սև ժայռի վրան
Կանգնած կար վաղուց և միշտ անսասան:

Այն իսկ ամրոցում, մութ և ահաւոր
Ապրում էր չքնաղ Թամարն մենաւոր.
Գեղեցիկ ինչպէս մի սիրուն հրեշտակ,
Բայց և չար—որպէս մի դև դժնդակ:

Կէս գիշերային մթութեան միջին,
Ոսկեզոյն լուսով, ճրադն էր վայլում,
Եւ ուշ գիշերւան անցնող ճամբորդին
Հանգիստ գտնելու էր հրաւիրում:

Ինչպէս մարմնացած ցանկութիւն և կիրք
Ընդմիշտ լսւում էր նրա ձայնը հեղիկ.
Թամարն էր կրքոտ մի կախարդուհի,
Ունէր գօրութիւն անիմանալի:

Եւ այդ փերիի գերբնական ձայնին
Միշտ լսում էին թէ այր և թէ կին.
Եւ երբ բացւում էր դուռն իր առաջին,
Իսկոյն յայտնւում էր մռայլ ներքինին:

Թանդ մարգարիտից և դիպակներից
Պատրաստ կար փափուկ մահիճ, բմբուլից.
Եւ ամաններում պատւական գինին,
Իր տիրուհու հետ կըսպասէր հիւրին:

Այրըւող ձեռքերն իրար էին կպչում,
Շրթունք շրթունքի յաճախ մօտենում.
Եւ կրքոտ, վայրի աղաղակները
Լսւում էին անդ ամբողջ գիշերը:

Կարծես հէնց այդ իսկ դատարկ ամրոցում
Բորբոքած արեամբ մարդիկ և կանայք
Գիշերւայ հարսնիք էին կատարում,
Ինչպէս յետ Թաղման հարուստ խնճոյքում:

Բայց երբ որ արևն վաղ առաւօտեան
Ձգեց իր ճաճանչն լեռների վրան՝
Մի ակնթարթում մութ և լռութիւն
Տիրեց Թագուհու մռայլ ամրոցում:

Միայն Տերէքը Դարիալի կրճում
Գոռում-գոչումով աղմուկ էր հանում,
Ալիքը ալեաց վերայ բարձրանում,
Ալիքը այն միւս ալիքին քըշում...

Եւ տխուր լացով շուտ անցան նրանք,
Ջտապով տարին մի անկեանք դիակ...
Բայց պատուհանում մի բան էր վայլում—
Եւ մեղմիկ ասում—խնդրում եմ ներումն...

Եւ այնքան քնքոյշ էր հրաժեշտն այն
Այնպէս անոյշ էր ձայնը ղօղանջում,
Կարծես հրճւանքը քաղցրը տեսութեան
Եւ լոկ վիաղաքշանք էր նա իսոստանում...

Մ. Միասնեան

ՓԱՌՍՏ ԵՒ ՓԱՌՍՏԻՆԱ

(Պատմական պատկեր)

Ներոնը, որ Հռոմը երբ և իցէ կառավարող ամենախիստ բռնակալներից մինն էր, երևակայում էր իրան մեծ երգիչ: Նա կարծում էր, որ ոչ ոք իրանից լաւ չի կարող երգել և ածել քնարի վրայ: Երաժշտական բոլոր մրցութիւնների մէջ նա հանդէս էր գալիս իբրև երգիչ և թէև հասարակ մի երաժիշտ էր իրօք, բայց չընայած դրան՝ միշտ ստանում էր առաջին մրցանակը: Եթէ որ է երգիչ մտքից անգկացնէր նրա հետ մրցել՝ պէտք է դրա փոխարէն վտանգի ենթարկէր իր անձը:

Միևնոյն ժամանակ Հռոմումը ապրում էին քոյր և եղբայր, Փաուստն ու Փաուստինան: Տղան տասն և չորս տարեկան էր, իսկ աղջիկը տասն և երեք: Նրանք երկուսն էլ հրաշալի երգում և նւագում էին քնարի վրայ: Չընայած իրանց փոքրահասակ լինելուն՝ արդէն նշանաւոր էին. հարուստները շատ փոդ էին վճարում, որ լսէին նրանց երգեցողութիւնը, երբ կրկէսներում տեղի էին ունենում հռոմայեցիների այնքան սիրած ժողովրդական տօնախմբութիւնները՝ քոյր և եղբայր միասին հրաւիրում էին մասնակցելու:

Փաուստն ու Փաուստինան, որ ամեն տեղ լաւ ըն-

դուներուԹիւն էին գտնում և կրում էին փառքի դափնիները՝ շնորհիւ իրանց տաղանդի կարողացան բաւականին փող աշխատել։ Քնքշօրէն իրար սիրելով՝ նրանք իրանց համարում էին բոլորովին երջանիկ, մտքերիցն անգամ չանցկացնելով, որ գլխներին մի փորձանք է պատրաստւում։

Ներոն կայսրը պառկած էր իր շքեղ պալատի հով պատշգամբում, որ գտնւում էր Պալագինեան բլուրի փեշերի վրայ։ Ծիրանագոյն ծածկոցը ձգւած է ոսկեայ և սդափեայ զարդարանքներով սքնւած մահճի վրայ, որտեղ հանգստանում էր բռնակալը։ Նա տխուր է։ Նրան ոչինչ չի զարճացնում, ոչինչ չի գրաւում. ոչ շատրւանի հեզ կարկաչիւնը, ոչ թանգագին խնկանոցի բուրումը և ոչ էլ հազագիւտ թռչունների երգը, որոնք թռչկոտում են գափնի ծառերի վրայից։ Վհատ և մռայլ, նա լուռ հանում է մատներից թանկագին մատանիները։ Լուկիանոսը, նրա ասենասիրելի և հաւատարիմ ծառան, կանգնած է նրա առաջ՝ չհամարձակւելով հարցնել նրանից իր տխրութեան պատճառը։

Ձեռքի մի լայն շարժւածքով, ցոյց տալով բլրի փեշերի վրայ տարածւած ահագին քաղաքը, Հռոմը՝ իր հազարաւոր փողոցներով և տաճարներով, որի վրայ նա իշխում է, Ներոնն ասում է.

—Լուկիանոս! Ի՞նչիս է պէտք իմ մեծութիւնը, ինչ ուրախութիւն է, որ ես թագաւորների վրայ թագաւորեմ, որ ես կառավարում եմ ամբողջ աշխարհը։ Ինձ համար ամենից թանգ արժէ առաջին երգչի փառքը, որի հետ ոչ ոք չկարողանար մրցել։

—Տէր, պատասխանեց Լուկիանոսը, քո երգչական փառքը անխախտ, անվիճելի է. քանի որ Կապիտոլիան կանգնած է իր տեղը՝ Ներոնի մասին կըխօսին, ինչպէս անզուգական մի երգչի մասին!

—Աւաղ!

—Ի՞նչ, կասկածում ես. մի՞թէ, տէր, դու չէիր, որ բոլոր մրցութիւնների մէջ ստանում էիր առաջին մրցանակը։

—Դրանից ի՞նչ։

—Այն, որ ցոյց է տալիս, թէ դու չունես քո մրցակից երաժիշտը և երգիչը։

—Դու սխալւում ես, իմ բարի Լուկիանոս! Օ վիշտ! Ես տխուր եմ, որովհետև այս առաւօտ լսեցի, թէ երկու երեխայ կայ, որ ինձանից թէ լաւ են ածում քնարի վրայ, և թէ երգում են աննման։

—Ի՞նչ է այդ քաջահմուտ երաժիշտների անունը։

—Փառւստ և Փառւստինա։

—Այո, գիտեմ... քոյր և եղբայր են։ Ճիշտ է, որ Հռոմը նրանց համարում է երևելի երգիչներ, բայց հաւատա, տէր, որ նրանց փառքը երկարատև չէ։ Այդ փոքրահասակների ձայնը նոյնքան քիչ է նման քո հրաշալի ձայնին, ինչպէս ծղրիտի աղաղակը սոխակի երգին։

—Այդ էլ պէտք է ցոյց տաս! գոռաց Ներոնը չարացած։—Եթէ Փառւստը և Փառւստինան անսրժան են իրանց փառքին—ես կըպարգևեմ նրանց կեանքը, իսկ եթէ, ի դժբախտութիւն իրանց, նրանք ինձանից լաւ են երգում...

Բռնակալը չըվերջացրեց ասածը, բայց դաժան ձևը և սպառնացող շարժումները ամեն ինչ հասկացրին Լուկիանոսը դողաց. ճիշտ է. նա թէև շողոքորթում էր իր պետին, բայց արդարասիրութեան զգացմունքը բոլորովին էլ չէր հանգել նրա մէջ. յաճախ երբ այդ այնքան էլ վըտահութիւն չէր պահանջւում, նա բռնում էր անմեղների կողմը։

Այն ինչ Ներոնը հրամայեց անյապաղ բերել Փառւստին և Փառւստինային, և որպէսզի նրանք շտապեն՝ աւելացրեց. «Ես սպասում են նրանց»։

Մ՛ռայլ, խիստ, ճակատը կիտած՝ նա էլի լռեց, իսկ նրա շուրջը՝ վախից սարսափած՝ կանգնած էին նրա պալատականներն ու ծառայողները։

Այդ ժամանակ քոյր և եղբայր մօտենում էին պալատին։ Նրանք հպարտանում և ուրախանում էին, որ բախտ են ունենալու իրանց տաղանդը ցոյց տալու մեծ պետին։ Գալու միջոցին Փառւստը կարգի էր գնում քնարը, իսկ Փառւստինան կիսաձայն կրկնում էր իր լաւագոյն երգերը։ Նրանց մօտից անցնողները բարևում և ժպտում էին։

«Հարի առողջութիւն, Փառւստ, երկար կեանք, Փառւստինա»! լսւում էին ձայները։

Երկար կեանք! ահա թէ իսկապէս ինչ պէտք է մաղթել այն ամենին, որ մօտենում է Պալատինեան բլուրին։

Ահա փոքր երգիչները Ներոնի առաջ են։ Եղբայրն առաւ արդէն նախերգանքի մի քանի քաղցրահնչիւն ակորդներ, իսկ քոյրը ընդունելով ոգևորւած դիրք՝ պատրաստւում է երգելու... Ներոնի աչքերում փայլեցին նախանձի և չարութեան կայծերը։ Լուկիանոսը տեսնում է, որ եթէ նրանք ցոյց տան իրանց տաղանդը՝ կորած են ու կորած։ Նրանց մանուկ հասակը և դէմքը շարժեցին Լուկիանոսի սիրտը. նա մօտեցաւ առաջ, իբր աւելի լաւ լսելու և հանդարտ, շատ հանդարտ մրմնջաց նրանց ականջին։

—Վախեցէք բռնակալից!

Յետոյ արագ հեռանալով՝ կանգնեց թագաւորի չետև, որտեղից հայեացքներով և շարժումներով հասկացնում էր քոյր ու եղբօրը, թէ ինչ վտանգի մէջ են նրանք։

Փոքրիկ երաժիշտները սարսափեցին։ Նրանք սկսեցին աճել և երգել թոյլ կերպով, առանց զգացմունքի, նւագածութիւնը չէր յարմարւում երգին։ Նրանց ձայները դողում և կեղծ էին դուրս գալիս։ Որքան նրանք թուլանում էին, այնքան էլ պարզւում էր բռնակալի դէմքը։ Երբ Փառւստինան կեղծեց, Ներոնն ուրախ ծիծաղեց և, երգի վերջանալուց յետոյ՝ ասաց.

—Հեռացէք! ապրեցէք ձեզ համար խաղաղ և շարունակեցէք ձեր զբւելի երաժշտութեամբ ուրիշների ականջները խլացնել. ես այդ ձեզ թոյլ եմ տալիս ամենայն բարեհաճութեամբ.—Յետոյ, դառնալով իր մտերմին՝ ասաց.

—Օ, Լուկիանոս, Ներոնը երաժշտութեան մէջ ես կըմնայ անզուգական, ինչպէս որ նա է ամբողջ աշխարհի տէրը։

Աշխարհի տէր! Նա երկար այդպէս չըմնաց։ Մի քանի ամիս անցած այդ բանից՝ նա զրկւած գահից՝ ինքը իր վրայ ձեռքերը բարձրացրեց. Այն ժամանակ կատաղի ժողովուրդը սկսեց Ներոնի ընկերների և մտերիմների ջեռնել, տեղից ընկնել, Ներոնի,—որին կանչում էին ոչ այլ կերպ, եթէ ոչ ճիւաղ անունով։ Արդէն Ներոնի մօտ մարդկանց մեծ մասը բռնւած և կատր-կատր էին եղած ամբոխից։ Լուկիանոսը մի կերպ ամբողջ շաբաթ կարողացել էր

կենդանի մնալ, բայց ահա նրա ապաստարանը ևս գտնված է։ Երկիւղի մէջ նա սկսեց փախչել. ամբոխը հետևում է նրան սպառնալիքներով, չիշոցներով։ Ահա քիչ է մնում, որ նրան հասնեն... հազարաւոր ձեռքեր են երկարանում, որ նրան բռնեն։ Ցանկարծ երկու երեխայ կանգնում են հետևողների և անբախտի մէջ տեղը։

—Ֆաուստ և Ֆաուստինա, գոռում է ամբոխը։ Զարացած ամբոխը վայր է դնում զէնքը, որպէսզի չըվնասեն երդիչներին. քոյր և եղբայր օգտւելով այդ վայրկեանից՝ երգում են իրանց ամենալաւ երգերը։

Ի՞նչ են երգում նրանք։ Յոյն բանաստեղծի այն մաղթանքը, որով նա դիմում է մարդկանց յարգելել արդարասիրութիւնը և ներողամտութիւնը. ինայենք ժժրախտին! չըպէտք է մեզ նման արիւնը թափենք. չըպէտք է օգտւենք մեր յաղթութիւնից, գերադասենք խաղաղութիւնը և հեզութիւնը չարութիւնից ու հալածանքից։

Մանուկ երիտասարդները այդ խօսքերը արտասանեցին այնպիսի սրտաշարժ կերպով, նրանց քնքոյշ, բարակ ձայները հնչում էին այնպէս ուժեղ և զգայուն, որ ամբոխի կատաղութիւնը հետզհետէ դադարեց։ Ֆաուստն ու Ֆաուստինան, օգուտ քաղելով այդ վայրկեանից՝ բռնում են Լուկիանոսի ձեռքից և, շարունակելով երգելը, դուրս են գալիս մի քիչ առաջ չարացած, բայց այժմ նրանց ազատ ճանապարհ տուող ամբոխի միջից։ Ահարկու ամբոխը ներում է բռնակալի նախկին սիրելու սխալմունքները և թոյլ է տալիս ազատ հեռանալու այն տղաների պաշտպանութեան տակ, որոնց երբեմն նա փրկել էր մահից։

Պօղ. Սբէլեան.

Ցղի կանանց առողջապահութեան մասին

II

Ցղի կնոջ կերակուրը։ Արեան դէպի որովայնը ուժեղ հոսանքի պատճառով ցղիների մարսողութիւնը շատ հեշտ կարող է խանգարւել, նոյն իսկ **դիեթայի** (պահեցողութեան կանոնների) այնպիսի փոքրիկ զանցառութիւնների ժամանակ, որոնք առանց պատժի են անցնում ոչ ցղի կանանց համար։ Ցղիների **դիեթայի** դլխաւոր հիմքը պէտք է հետևեալ կանոնը լինի. **այս նոր դրութեան մէջ նոյն կերակուրը գործ ածել, որ առաջ էր գործ ածում եւ որին սովորել է։** Կերակրի փոփոխութիւնը, այդ նորը որքան էլ լաւ և սննդարար լինի, ստամոքսին կըստիպէ յարմարել նրան և անպատճառ առաջ կըբերի մարսողութեան խանգարում, մինչև որ կազմւածքը նոր պայմաններին կըսովորի։ Ինչ վերաբերում է կերակրի աւելի մանրամասն քննելուն, նրանից պէտք է դուրս գցած լինեն ստամոքսը սաստիկ գրգռող բոլոր համեմունքները. բոլորովին չի կարելի գործ ածել թթու դրած պտուղներ, որքան կարելի է քիչ մանանեխ, տաքդեղ և քացախ։

Օսլային և խոլային բաղադրութիւններով հարուստ կերակուրը (ալիւրառատ նիւթերից) մարսւելու համար մարսողական գործարաններից շատ մեծ աշխատանք է պահանջւում, որի պատճառով կարտօֆիլի, կարկանդակների կամ շատ իւղալի ուտելեղէնների գործ ածելը պէտք է սահմանափակած լինի։ Աւելի սննդարար և հեշտ մարսող կերակուրը կարող է լինել ոչ իւղալի միս, ձուկ, որսի միս և եփած պտուղներ ու կանաչի—ուստի դրանք էլ պէտք է լինեն բոլոր ուտելեղէնների բաղադրիչ մասը։ Ինչպէս մսի, նոյնպէս և ձկան թարմն է հեշտ մարսւում, այլ ոչ աղ դրածը կամ չորացրածը, իսկ սրանք ինչպէս ստամոքսից շատ գործ պահանջողներ, կարելի է քիչ գործ ածել։ Անհրաժեշտ ենք համարում դարձեալ կրկնել, որ յայտնի կերակրի սովորելը մեծ դեր է խաղում մարսողութեան մէջ, և որ աւելի յարմար է զանազան տեսակ թէ բուսական և թէ կենդանական նիւթերից կազմւած կերակուրը. ուստի մեր նպատակը կըլինի միայն ցոյց տալ, թէ ինչպիսի բաղադրիչ մասերը պիտի սահմանափակել, ինչպիսին բոլորովին դուրս ձգել, բայց այդ նիւթերի խառնելու իրաւունքը պէտք է իւրաքանչիւր կնոջ կամքին թողնել։ Այսպէս կոչւած օրինաւոր **մենիւի** կազմելը բոլորովին անօգուտ գործ է դառնում, իսկ նրան կէտ առ կէտ հետևելը մինչև անգամ վնասակար, որովհետև կարող է բոլորովին հակառակ գնալ առաջնայ, սովորական կերակրի հետ։

Ստամոքսը միանգամից շատ չաշխատեցնելու համար, աւելի լաւ կըլինեը, որ ցղի կինը կերակուրն աւելի յաճախ ընդունէր, բայց ամեն անգամ քիչ քանակութեամբ, եթէ օրինակ դուք սովորել էք օրական երկու անգամ ուտել, բայց ցղութեան ժամանակ շատ օգտակար կըլինի բաժանել մի և նոյն քանակութիւնը երեք անգամի։ Այս կանոնը շատ կարևոր է և դրան հետևելը կօգնի կանոնաւոր մարսողութեան պահպանելուն։

Բաւականին վնասակար սովորութիւն է ուշ, համարեա քնելուց առաջ ընթրելը։ Ստամոքսի լիքը լինելը բացի այն, որ անհանգստութիւն է պատճառում, առաւօտները ախորժ է տալիս փոխելու, որին ցղինները այնքան յաճախ են ենթարկւում։

Ինչ խմիչքներին է վերաբերում, նրանցից հարկաւոր է բոլորովին դուրս ձգել մուգ սուրճը, ինչպէս շատ գրգռող և տաքացնող խմիչք։ Թոյլ սուրճը կարող են խմել նրանք, որոնք սովոր են։ Ցղի կնոջ համար ամենալաւ և շատ օգտակար խմիչքն է բաց թէյը և սեւեակի ջուրը, թէ մաքուր և թէ կիտրոնով, քաղցրաւենիքով, նայած ճաշակին և սովորութեանը։

Կարմիր գինին անպայման վնասակար է, որովհետև նրա մէջ մեծ քանակութեամբ բաղկացած աղաղնից (таннинъ) ստամոքսի կապւածք է առաջ գալիս։ Փոքր քանակութեամբ այն կանայք կարող են գործ ածել, որոնք ցղութիւնից առաջ սովոր են եղել դրան։ Իսկ եթէ ցղի կինը սկզբից գինի բոլորովին չէր խմում, թող այժմ էլ չըսովորի։ Բոլորովին սխալ կարծիք է, որ գինին կերակրի լաւ մարսելուն և կազմւածքի ամրանալուն նպաստում է. թէև, հաւանական է, լինում են դէպքեր, որտեղ ցղի կնոջ համար գինին պէտք է գործ ածել միայն բժշկի խորհրդով։

Բայց և այնպէս չընայելով պահեցողութեան կանոնների բոլոր նախազգուշութիւններին և կանոնաւոր հետեւելուն, շատ կանայք այդ դրութեան մէջ ստամոքսի կապւածքից տանջւում են։ Դրանից բժշկելու համար խիստ լուծողական միջոցներ չըպէտք է գործ ածել. դրանք միայն ժամանակաւորապէս են օգնում, իսկ յետոյ նորից մի և նոյն դրութիւնն են առաջ բերում։ Ստամոքսի կապւածքով տանջւողներին օգնելու համար կարելի է պատրաստել շինած պահեցողական միջոցներ (фруктовыя діэты) առաջարկել։ Յաճախ ստամոքսը բոլորովին կանոնաւոր

պահելու համար հարկաւոր է լինում ուտել մի կտոր խըն-ձոր կամ նարինջ։ Բացի այդ, ճաշի կամ նախաճաշի ցան-կի մէջ կարելի է մտցնել քիչ լուծողական յատկութիւն ունեցող նիւթեր, ինչպէս, օրինակ՝ թուզ, սալոր, դեղ-ձից և սալորից պատրաստած կոմպոտ, գունաւոր կաղամբ, կանաչ սիսեռ, սալաթ և այլն։ Ալիւրի թեփը նոյն-պէս շատ յարմար լուծողական միջոց է. խնձորի կամ նարնջի փոխարէն առաւօտեան կարելի է լսմել մի բա-ժակ ջուր, խառնած մի սեղանի դդալ թեփի հետ։

Եթէ ստամոքսի կապաճը այնքան ուժեղ է, որ այդ դիւրին միջոցները չեն օգնիլ, կարելի է առաջարկել միշտ օրաչ միևնոյն ժամանակը սենեակի ջրով կլիզմ դործածել՝ ստամոքսը գործողութեան յայտնի կանոնաւո-րութեան սովորեցնելու համար։ Կլիզմի միջոցով ստամոք-սը այդպէս մաքրելուց յետոյ անպատճառ պէտք է խիստ պահպանել այն պահեցողութեան կանոնները, որի մասին մենք հէնց նոր ասացինք, ստամոքսի կապաճը ապա-գայում չկրկնելու համար։

Մարսողութիւնը կանոնաւոր կերպով չի կարող կա-տարել նստակեաց կեանք վարելով։ Բոլորը այդ գիտեն, բայց յղի կանանց վերաբերեալ դեռ շատերը մի նախա-պաշարմունք ունեն, որ մանկան օգտի համար ապագայ մայրը պէտք է որքան կարելի է քիչ շարժւի։ Յղի կա-նանց պահեցողութեան կանոնների այդ բաժնի քննելուն —թէ որքան օգտակար և անհրաժեշտ է նրանց համար շարժողութիւնը—հէնց այժմ կանցնենք։

Նստակեաց կեանք վարելով (այս անւան տակ մենք ենթադրում ենք սենեակներում աւելորդ մնալը, թէկուզ ժամանակի մեծ մասը անկողնում կամ մահճակալի վրայ պարկած լինեն) արեան հոսանքը դէպի որովայնի և կոն-քի գործարանը շատանում է, որ յղի կնոջ համար շատ հեշտ կարող է ստամոքսի խանգարում առաջացնել։ Բացի այդ, շնչառութիւնը կատարող մկանունքները թոյլ և ան-կատար կերպով են ներգործում, այնպէս որ արիւնը մարմ-նի մէջ տարաձւում է ոչ բոլորովին թթուած, որ իրան կարգին վատ է ներգործում մօր և մանկան առողջութեան վրայ։ Իսկ մարսողութեան խանգարումը, թոքերի անբա-ւական գործունէութիւնը ընդհանուր վատառողջութեան հետ միասին՝ յղի կնոջը վերջնականապէս կապում են ան-կողնից, այնպէս որ մի ինչ որ կախարդական շրջան է ստացւում, որից ոչ մի տեսակ բժշկութիւնով չի կարելի ազատւել։ Ի նկատի ունենալով նստակեաց կեանքի այդ-պիսի ազդեցութիւնը, հարկաւոր է հէնց յղութեան սկզբ-ից հոգալ օդում շատ անցկացնելու համար։ Այն կանայք, որոնք սովորել են զբօսնել օրական մի քանի ժամ, հա-ւանական է, պէտք է շարունակեն այդ զբօսանքները, որովհետև չափազանց օգտակար են. իսկ նրանց, որոնց անհրաժեշտութիւնը կամ սովորութիւնը ստիպել են նըս-տակեաց կեանք վարել, անհրաժեշտ է, չանուն իրան և մանկան առողջութեան, այդ կեանքն աւելի դործնական փոխել։

Չատ յաճախ ստիպւած ենք լսել այսպիսի հարց. ինչպէս զբօսնել, ոտքով թէ կառքով։ Դրան կարելի է պատասխանել, որ միայն կազմւածքի կատարած յայտնի մկանունքային դործողութիւնն է ստիպում նրա մարս-ողութեան և շնչառութեան դործարաններին իրան կարգին գործել, ուստի ոտքով զբօսանքները ներկայանում են այդ պահանջներին միակ բաւականութիւն տուղը։ Կառ-քով դնալն էլ յայտնի օգուտ է բերում, թոյլ տալով յղի կնոջը երկար ժամանակ մաքուր օդում մնալու, մինչև ան-գամ բաւականին երկար ճանապարհորդութիւնները վնաս չեն տալիս, ի հարկէ, եթէ կառքը զսպանակներով է (рес-сора) և ճանապարհը այնպէս չէ, որ վնասի և առողջ մարդուն։ Դարձեալ մի հարց, որ յղի կանանց համար յա-ճախ մտածողութեան նիւթ է դառել։ Կարելի՞ է չորս կամ հինգ յարկանի տանը ապրել. ուրիշ կերպ ասենք, վնասակար չէ՞ արդեօք այդպիսիներին սանդուղքներով բարձրանալը։ Սանդուղքներով բարձրանալը իսկապէս մի-ևնոյն զբօսանքն է, բայց որն աւելի ոյժ է պահանջում աճուկների և որովայնի մկանունքներից, որ նոյնպէս ա-ռաջ է բերում թոքերի աւելի գործողութիւն։ Սանդուղ-քներով դնալ-գալը երեխայի վրայ վատ ազդեցութիւն թողնող մի որևէ ցնցում չի կարող առաջացնել, ուստի սանդուղքներով բարձրանալը և ցածրանալը ոչ թէ պէտք է արգելել, այլ նրան կարելի է ընդունել նոյն իսկ լինչ-պէս օգտակար ֆիզիկական շարժողութիւն։ Ի հարկէ, դա օգուտ է այնպիսի յղի կանանց համար, որոնք իրանց այդ դրութեան պահանջի համեմատ են հագնւած։ Կորսետով ձգւած, մեծ կրունկներով կօշիկներ հագած կնոջ ինքը կազմւածքը՝ կրծողքի սանդուղքների դէմ—շնչարգելու-թիւնով, սրտի խփոցով և չափազանց յոգնածութեամբ։ Ինչ վերաբերում է երկաթուղիներով աւելի երկար ճանա-պարհորդելուն՝ համարձակ կարելի է համաձայնել, ի հարկէ ազատւելու ոչ շատ մօտ ժամանակներին։ Ինչպէս մենք ասացինք, ոտքով զբօսանքը կազմւածքի վարժութեան ամենայարմար ձևն է։ Հասկանալի է, որ շարժողութեան միւս տեսակներն էլ կարող են միահաւասար օգտաւէտ լինել. կարելի է յղի կնոջը խորհուրդ տալ ամառը, այգինե-րում, չբզոգնեցնող աշխատանքներ, «կրոկէտ», «սերսօ» խա-ղեր և այլ ֆիզիկական վարժութիւններ, որոնք կազմւածք-քից չափազանց լարուածն չեն պահանջում և սաստիկ զար-կեր (толчки) չեն առաջացնում։ Այս հիման վրայ վնասակար ֆիզիկական վարժութիւնների թւին պէտք է դասել պարագ վազելով և թռիչքներով խաղերը, իսկ տնային պա-րապմունքներից—ոտքի մեքենայի վրայ կարելը։ Պարերն էլ, որոնց ազդեցութեան մասին չաճախ երիտասարդ յղի կանայք հարցնում են, կարող են անվնաս մարմնամարզա-կան վարժութիւն համարւել, եթէ նրանք ծայրայեղ հա-կառողջական պայմաններում չըլինեն, որոնց մէջ նրանք գտնւում են։ Չեղձուձիչ, փոշոտ դահլիճը, շատ մարդկանց շնչառութիւնով տաքացած և փչացած մթնոլորտը, «դե-կոլտէ» հագնելը, վերջապէս ինքը ժամանակը—պլշերւայ ուշ ժամերը—այդ բոլորը ամենավատ կերպով չի կարող չ'արտայայտւել յղի կնոջ շուտ տպաւորող կազմւածքի վրայ։

Մեզ մնաց քննել դեռ մարմնի այն մասի հոգացո-ղութիւնը, որ մարսողութեան և շնչառութեան անդամ-ներից յետոյ ամենից շատ է յղութեան ժամանակ հիւան-դութիւնների ենթարկւում, այսինքն կաշին։ Այդ առ-թիւ մի քանի խորհուրդներ նախընթաց բաժիններում մենք յայտնեցինք—յղիների բնակարանի և հագուստի մասին խօսելիս։ Այստեղ մենք միայն յղութեան ժամանակ վաննաների գործածութեան նշանակութիւնը ցոյց կը-

տանք։ Ձրխօսելով արդէն մարմնի ընդհանուր մաքրութեան պահանջների մասին, տաք վաննաները հրաշալի կերպով ներգործում են պանազան նեարդային հիւանդութիւնների, անքնութեան և նեարդների զանազան երեւոյթների խանդարման վրայ։ Բացի այդ, քրտնելը կանոնաւորելով, այս վաննաները լաւ պահպանողական միջոց են նաև մրսելուց։ Վաննայի բարեխառնութիւնը պէտք է լինի 28 աստիճան (R), յետոյ կարելի է աւելի հովին անցնել, 26—24 աստիճանի։ Վաննա ընդունելու ամենալաւ ժամանակը քնելուց առաջ է։ Ձատ չաճալս յղիների յամառ անքնութիւնը վիջանում է տնային այս հասարակ միջոցին։ Եթէ մի որև է պատճառով չի կարելի վաննա ընդունել, այն ժամանակ կարելի է լողանալ «թեշտում» (կիսավաննա), որի ներգործութիւնը հաւասար կլինի վաննայի ներգործութեանը։ Աւելի հեշտ է շինել կիսավաննան այսպէս. վերցնել խոր տաշտ և մի ծայրի տակը մի բան դնել։ Տաշտի մէջ այնքան ջուր լցնել, որ նստած ժամանակ ծածկի յղի կնոջ սեռուկները և փորը։ Այս վաննայի բարեխառնութիւնը մի՛ևնոյնը պէտք է լինի, ինչ որ ընդհանուրինը։ Որքան հնարաւոր է, վաննաներով պէտք է չաճալս օգտուել, շաբաթական 3—2 անգամ։ Վաննայում կարելի է մնալ 10—15 րոպէ։

Ոչ պակաս ներգործող միջոց են մրսելու և յղութեան միւս բարդութիւնների դէմ մարմինը թաց սրբիչով կամ սպունգով տրորելը։ Դրանք էլ հարկաւոր է ընդունել նոյնպէս շաբաթական 3—4 անգամ, առաւօտները, անմիջապէս անկողնուց վերկենալուց յետոյ։ Թաց շորով կամ սպունգով սկզբում կարելի է տրորել միայն պարանոցը և կուրծքը։ Յետոյ, երբ մարմինը կըսովորի, հարկաւոր է տրորել ամբողջ մարմինը։ Մարմնի մակերևոյթը սառը ջրով տրորելուց յետոյ, հարկաւոր է իսկոյն և եթ չորացնել թաւուռ երեսսրբիչով կամ «բաղնիքների ձեռնոցներով»։ Այս բանը յղի կնոջ համար այնքան կարևոր և օգտակար միջոց է, որ բժ. Ա. Ստոկհէմը դրան անուանում է «շատ փիզիքական պակասութիւններ ոչնչացնող կենսադեղ»։

Եթէ կինը սովոր է դետում կամ ծովում լողանալու, նա կարող է յղութեան ժամանակ բոլորովին հանգիստ կերպով հետևել այդ սովորութեանը։ Նոյն իսկ շատ սառը ջրում լողանալուց ոչ մի վնասակար հետևանքներ չի երևացել յղի կնոջ համար։ Յայտնի չէ, թէ ո՞րտեղից է առաջ եկել այն նախապաշարմունքը, թէ սառը ջուրը մտած յղի կինը ամեն տեսակ վտանգների է ենթարկուում։ Սկզբում լողանալու անսովոր կինը յղութեան ժամանակ լողանալուս շատ հեշտ կըմրսի, ուստի աւելի լաւ է տնային վաննաներով օգտուել։

Բաւական ընդարձակ կերպով քննելով ապրելու այն կերպը, որ պէտք է ունենայ յղի կինը յօգուտ իրան և մանկան առողջութեան, մենք աւելորդ ենք համարում պատասխանել այն հարցին, թէ ի՞նչպիսի նախազգուշութիւններ պէտք է ընդունի յղի կինը տնից դուրս, հիւր եղած ժամանակ, որովհետև շատ բանի կրկնութիւն կլինէր։ Չենց այն հարցը, թէ յղի կինը կարող է հիւր գնալ, վճռուում է դրական մտքով, հաւանական է այնտեղ, որտեղ նա «կարող է լինել այնպէս, ինչպէս իրան տանը», այսինքն իրան դրսութեանը յարմարուող հապուստով։ Իսկ նրա մասին, թէ հարկաւոր է յղութեան ժամանակ թատրոն և զանազան տեսարաններ յաճախել, դոյութիւն ունի կարծիք, որ դա շատ վնասակար է, որովհետև մոր վրայ արտայայտուող մի որև է սաստիկ տպաւորութիւն կարող է արտայայտել և մանկան վրայ մի որ և է այլանդակութեամբ։ Այս պատմութիւնների մեծամասնութիւնը առասպելներ են. բայց միքանի անկասկած հետազօտութիւններ ցոյց են տալիս, որ այս կարծիքի մէջ մի փոքր հնամարութիւն կայ, ուստի հարկաւոր է յղիներին բոլորովին արդելել որ և է այլանդակների նայելը, լինեն դրանք կենդանի, թէ մեռած։

Վերջացնելով յօգուածը, մենք կասենք նրա հետևեալ հետևանքները. յղութիւնը կնոջ կազմուածքի կանոնաւոր և բնական դրութիւն է, այլ ոչ հիւանդութիւն, բայց և այնպէս այդ կանոնաւոր դրութիւնը այնպիսի յատկութիւններ ունի, որ յայտնի առողջապահական միջոցներին չըհետևելով՝ շատ հեշտութեամբ դժուար և երկար բժշկութիւն պահանջող հիւանդութեան է փոխուում։ Առողջապահութեան այս հասարակ պահանջների մասին չըհոգացող կինը ինքն իրան զրկում է իրան առողջութիւնը պահպանելու ամենամեծ իսկական միջոցից, իսկ ինքը ապագայ մանկան վերաբերեալ ներկայանում է ինչպէս մի չար և վնասակար, անհարազատ մայր։

—

Վերջացնելով յղի կանանց մասին այս փոքրիկ տեսութիւնը, մեզ մնում է ազաչել մեր երևոյասարդ և քնքոյշ մայրերին, որ նրանք թողնելով իրանց անհոգութիւնը և անտարբերութիւնը այսպիսի խնդիրների վերաբերեալ, լուրջ ուշադրութիւն դարձնեն այսպիսի դրւածքների վրայ և օգտուեն, առանց անմտաբար կրկնելու, թէ «առանց այդ դրւածքների միևչև այժմ ամեն բան գիտեն թէ ինչպէս է եղել»...

Ռ. Ճ.

Թիֆլիսի իրաւաբանների ընտրութիւնը

Կիրակի, մայիսի 18-ին Թիֆլիսի ժողովարանի համաձայն շինութեան մէջ տեղի ունեցաւ քաղաքիս առաջնակարգ իրաւաբանների (1897—1901 համար) իրաւասունների ընտրութիւնը։ Ընտրողները առաւօտեան ժամը 7-ից սկսել էին խռնուել չիշեալ շինութեան շուրջը։ Նախագահը ընտրութեան վերաբերեալ կանոնները կարդալուց յետոյ, ժամի 9½-ին սկսուեց ընտրութիւնը։ Մի քանի լրագիրների կողմից անտեղի յարձակումների պատճառով, սպասուում էր, որ ընտրութիւնները ալմկալի կըլինեն. սակայն սպասածից աւելի քան կանոնաւոր և խաղաղ անցան ընտրութիւնները։ Առաջարկուած 177 թեկնածուներից միայն 57 հոգի ընտրուեցին, որոնցից միայն 19-ը նոր մարդիկ են. էլի պիտի ընտրուեն 23 իրաւասու—ընդամենը 80 հոգի և սրանց էլ 16 կանդիդատ։

Քւէարկութեան մասնակցում էին 1060 ընտրողներ, որոնցից հայերը ունէին 642 ձայն, միւս ազգութիւնները (վրացի 195, ռուս 193, լեհացի 24, գերմանացի 15 և թուրք 12) միասին առած՝ 457 ձայն։

Առաջ ենք բերում նորընտիրների ազդանունները, ըստ պարապմանց դասակարգութեան։

Ընտրուած են 8 բժիշկ. Մ. Զ. Աւթանդիլեան, Ս. Յ. Անանեան, Գ. Ն. Քոչարեանց, Մ. Վ. Լունկևիչ. Ե. Ի.

Մալինին, Ի. Գ. Մելիքեան, Ն. Ա. Խուդաթեան. Մ. Ս. Զահ-Պարոնեանց։ Երիցաչափներ և ճարտարապետներ—7 հոգի. Ի. Մ. Ալիխանեան, Ի. Ա. Ռիլֆիելդ, Կ. Յ. Ռուտկևիչ, Ն. Ի. Կարապետեան, Ա. Պ. Ժիմկևիչ, Տ. Հ. Էնֆիաճեանց, Գ. Զ. Եարալեան։ Փաստաբաններ (երդ. հաւատար.)—3. Գ. Գ. Եւանգուլեան, Պ. Ա. Օպոչինին, Կ. Ն. Րէյտէր։ Դատական պաշտօնեաներ—5. Ի. Ս. Ալիխանեան, Է. Փ. Ռուդարդտ, Ե. Գ. Երէցփոխեան, Լ. Ե. Մգեբրեան, Ի. Դ. Ուտնելով։ Կառավարչական պաշտօնեաներ 4 պայծ. իշխ. Պ. Ա. Դրուզինսկի, իշխ. Դ. Զ. Մելիքով, իշխ. Ա. Զ. Զիլոկայև, Պ. Մ. Եակիմով։ Զինուորականներ—4. իշխ. Ա. Ի. Ռէհրբուգեան, իշխաններ՝ Գ. Ի. և Ի. Մ. Զամբակուրիան-Օրբէլեաններ, Վ. Դ. Ղորղանեան։ Մանկավարժներ—3. Յ. Ա. Մելիք-Ռէգլարեան և Հ. Հ. Օստրոգորսկի։ Խմբագիրներ—3. Ա. Ա. Յովհաննիսեան, իշխ Գ. Մ. Թումանեան, Ա. Ա. Քալանթար։ Հանկիրներ և բանկային գործիչներ—3. Պայծ. իշխ. Մ. Ա. Գրուզինսկի, Ա. Ա. Յովհաննիսեան, Վ. Թ. Ղևիվանի, Ա. Փ. Փրիդոնեան, Մ. Յ. Թամամշեան, Լ. Թ. Տիգրանեան, Ի. Ի. Ծովինեան։ Վաճառականներ և գործարանատէրեր—6. Կ. Մ. Ալիխանեան, Ի. Ս. Ղորղանեան, Ն. Ս. Փրիդոնեան, Ի. Ա. Թաւիրեան։ իրանց հաստիքով ապրողներ — 4. իշխաններ՝ Ն. Վ., Ն. Ե. և Պ. Մ. Երկ.-Ղորղութեաններ, Ա. Ս. Ծուրինեան։ Քաղաքային վարչութեան պաշտօնեաներ—4. իշխ. Ա. Մ. Երկայնաբազուկ-Ղորղութեան, Խ. Ա. Վերմիշեան, Ա. Ա. Իվանենկօ, Դ. Զ. Ղորղանեան։

Սրանք ըստ ազգութեան այսպէս են բաժանւում—37 հայ, 10 ռուս, 8 վրացի, 2 գերմանացի։ Լրացուցիչ ընտրութիւնները կըկատարուեն առաջիկայ կըրակի, յունիսի 1-ին։ Նորընտիրները ուղարկւած են ի հաստատութիւն։

գեղարուեստ

թատրոն, երաժշտութիւն

ՏՐԻԼԲԻ

Դրամա 5 գործ. 6 պատկեր հեղ. Դը Մօրէի.

Մի շարք անճոռնի, անճաշակ և անիմաստ պիէսների մէջ, որ վերջին տարիներս ներկայացնւում են եւրոպական և մեր բեմերի վրայ, Տրիլբին կազմում է բացառութիւն և պատկանում է այն սակաւաթիւ պիէսների թւին, որոնք դնում են մարդուս, մտածել են տալիս նրան գիտութեան կամ աւելի հիշտը՝ գերբնական մեծ, անդիմադրելի ոյժերի և այն չեզոփոխութեան մասին, որ այդ ոյժերը պիտի մարդկային կեանքին պարգևեն։

Նոր դիւտ չէ հիպնոտիզմը։ Այդ մի մեծ գիտութիւն է, որ հազարաւոր տարիներ առաջ շատ ազգերի յայտնի է եղել և յանկարծ թազուել, աներևոյթացել, ու վերջին դարումս կրկին յարութիւն առել։

Եւրոպայում շատ գիտնական ընկերութիւններ կան, որ բացառապէս, ամենալուրջ կերպով, աշխատում են անալիզի ենթարկել այդ գիտութեան մասունքները։ Սակայն մինչև այժմ էլ համարեա անյայտ։

Հիպնոտիզմով բժշկւում են շատ հիւանդներ։ Հիպնոտիզմով դասարանի սրամիտ և բծախիտ աշակերտներին մի որոշ ընդունակութեան աստիճան են տալիս։ Հիպնոտիզմով յանցաւորին իր բերանով մեղքերը խոստովանեցնում են, ուրիշի մտքերը կարդում են և այլն։ Ուրեմն հիպնոտիզմով կարելի է և ամբողջ աշխարհին ներշնչել սէր, խաղաղութիւն, անդորրութիւն։

Եթէ այդպէս է, էլ պետութիւնները ինչու են միլիոնաւոր զօրքեր, թնդանօթներ, ռազմանաւեր և քաղաքագէտներ, դատաւորներ պահում։ Ինչի՞ են պէտք ճեմարանները, գիտութեան կաճառները, արհեստաւորները, մարդուս խելքն ու միտքը մշակողները։

Հիպնոտիզմով կարելի է և հարուստ լինել, կուշտ և խրդմբ հանգիստ։ Ո՞վ դիտէ, գուցէ ժամանակը հոդային մարդուն էլ այն վեհ աստիճանին կը հասցնէ որ նրա անասնական կեանքը մեռնելով՝ այս աշխարհում, այստեղ էլ կրսկսւի հէնց նրա աստւածային կենցաղը։ Երբ մարդս կըդադարէ դղալ քաղց ու ծարաւ, ցուրտ և ջերմութիւն, այլ կասլրէ միմիայն հոգեկան անդորր կեանքով, այն ժամանակ ի հարկէ կըդադարէ և գոյութեան կռիւը...

Գեղեցկուհի Տրիլբին (տ. Իւրևա), մի չենտելմէնի աղջիկ, հօր մահւանից յետոյ Անգլիայից եկել է Պարիզ, իր օրաւոր պարէնը վաստակելու, որը եղբօրն էլ ապրեցնելու, ինքն էլ ապրելու։ Բայց մի՞թէ հեշտ է Պարիզում արիւն քրտինքով ապրուստ հայթհայթել, աշխատանք գտնել։—Սակայն Տրիլբին հեշտ միջոց ունի եղբօրն էլ սովից ազատելու, ինքն էլ ապրելու։ Նա շատ է գեղեցիկ... Արտիստների շրջանումն էլ է նա չարգի։

Տրիլբիին նկարիչները ժամը հինգ ֆռանկ են վճարում, որպէսզի նրա մարմնի մասունքը նկարեն։ Մէկը ոտն է նկարում, միւսը բիւստը, երրորդը մարմինը։ Մի իսօքով հրեշտակ Տրիլբին իր ամբողջ մարմինը վաճառք է հանել, ամեն ինչ մատչելի արել, բացի սրտից։

Բայց այդ թշւառ գեղեցկուհու սիրտն աւելի է մաքուր, անարատ, քան բիւր օրիորդների և հարսների սրտերը։ Տրիլբիի վրայ սիրահարւած են արտիստիկ այդ շրջանի բոլոր գեղապէտները, որոնց թւում նշանաւոր Սւենգալի (Ալուվիգով) հրէայ երաժշտապետը և անգլիացի երիտասարդ նկարիչ Վիլլի (Բէժին)։ Փոխադարձ սէր է տածում Տրիլբին դէպի Վիլլին, սակայն հրաժարւում է ամուսնանալ նրա հետ, ասելով, որ իրանք հաւասար դիրք ունեցողներ չեն։ Խոստանում է Տրիլբին լինել Վիլլիի ստրուկը, աղախինը, սակայն ոչ ամուսինը։ Բայց Վիլլին երդւում է, որ եթէ Տրիլբին մերժէ իր խնդիրը, ընդմիշտ կըհեռանայ նա Պարիզից։ Վերջապէս երկար թախանձանքից յետոյ Տրիլբին նշանւում է Վիլլիի հետ։

Սւենգալին համոզում է Տրիլբիին, որ ամուսնանայ իր հետ, խոստանում է նրան մեծ հռչակ, հարստութիւն։ Տրիլբին լաւ ձայն ունի, բայց լսողութիւն չունի։ Սա բացէ բաց մերժում է Սւենգալիի հետ ամուսնանալ, բայց վերջը երբ Վիլլիի ծնողները դիմադրում են և հակառակում Տրիլբիի հետ ամուսնանալու, գեղեցկուհին ինքը խոստանում է իր սիրեցեալի ծնողներին, որ այդ պսակը երբէք չի կայանալ և երբ նրանք հեռանում են ու պատուհանից կամենում է Տրիլբին իրան վայր դցել, Սւենգալին բռնում է նրան, համոզելով իր հետ գնալ։ Առնում է Սւենգալին Տրիլբիի համաձայնութիւնը, մի ակնթարթում ներշնչում նրան իր կամքը, և հեպնօսիզէ եղած գեղեցկուհին այդ վայրկենից ընկնում է Սւենդալիի ճանկը։

Հռչակաւոր երաժշտապետը արտիստիկ շրջանից հեռանալիս ասում է, որ հինգ տարուց յետոյ նրանք կրսեսնեն իր ոյժը և Տրիլբիի ֆենօմինալ երգեցիկը։ Նա խոստանում է, որ Վիլլին էլ ուր հանդիպի, պէտք է թքէ երեսին։

Անցնում է հինգ տարին։ Սւենգալու և իր կնոջ հռչակը ամբողջ Եւրոպայում տարածւել է։ Նրանք ձեռք են բերել դափնիներ, մեծ հարստութիւն։ Պարիզումն են այժմ կոնցերտ տալիս։ Մայրաքաղաքը ալեկոծւում է, հիացել է նրանց առաջի կոնցերտից։

Սւենգալին հիւրանոցի սանդուղքների վրայ պատահում է Վիլլիին, և նրա երեսին թքում. վերջինս ընկերների հետ ապտակում են Սւենգալիին։

Երկրորդ կոնցերտն է Պարիզում. Սւենգալին իմանում է, որ Վիլլին բեմից շատ մօտ օթեակ է վեր առել։ Զայրանում է, չարանում։ Կինը կպմ և պատրաստ է երգելու։ Նա այժմ կատարեալ մի դիցուհի է։ Սւենգալին հարցնում է Տրիլբիից թէ արդիօք նա ոչ ոքի բացի իրանից չէ

սիրում և պահանջում է ապացոյց։ Դիցուհին իբր սիրոյ առհաւատչեայ՝ ծունր է դնում Սւենգալիի առաջ, նրա ոտի տակի փոշին համբուրում։ Սւենգալին սիրոյ ապացոյց է պահանջում, բայց Տրիլբիին փոխանակ նրան իր կրծքին սեղմելու, այրւած շրթունքները համբուրելու, ծունր է դնում նրա առաջ, այնպէս՝ ինչպէս հաւատարիմ շունը իր տիրոջ առաջ։

Ձէ կամենում Սւենգալին իր գերբնական ոյժով ներշնչել Տրիլբիին որ սիրէ իրան, նա ինքնաբերաբար սէր է պահանջում։ Եւ որքան մեծ է Սւենգալիի հոգեկան տանջանքը։ Աննկարելի ոչինչ չըկայ այս աշխարհում նրա համար. նա ձեռք է բերել մի հոչակ, որին նախանձում է ամբողջ աշխարհը, սակայն նա դարձեալ դժբախտ է։ Մարմինը վաճառք հանող, այսօր միմիայն իրան Սւենգալիի շնորհիւ տիեզերահոչակ երգչուհի Տրիլբին, իր հարազատ ամուսինը, որի կեանքն էլ ինքը Սւենգալին է փրկել նոր կեանք պարգևել, չէ սիրում իրան աստուածային այն վեհ սիրով, որին պէտք ունի ջղային իրաբորբոք Սւենգալին։

Սթափեցնում է Տրիլբիին մեծ երաժշտապետը, կանխաւ նրան յայտնելով, երգել այս անգամ այնպէս վատ, ինչպէս հինգ տարի առաջ։

Բեմի վրայ է Տրիլբին, սակայն նա մոռացել է երգելը. ոչ մի ձայն չի կարողանում հանել։ Ամբոխը գոռում է, աղաղակում, շարլատանութիւն համարում Տրիլբիի արածը։ Ուշաթափ ընկնում է նա։ Վելլիի գիրկը, որ օթեակից բարձրանում է բեմ սիրեցեալին ազատելու համար։

Դեղագէտների նախկին ապաստանման է Տրիլբին հիւանդ, նրան շրջապատել են Վիլլին, ծնողների հետ և իր նախկին նկարիչ բարեկամները հիւանդութիւնը ծանր է, մահը մօտեցել է։ Բժիշկը յայտնել է, որ մինչև առաւօտ չի ապրիլ։ Սւենգալին կաթւածահար է եղել և խոցոտուած սրտով եկել էվերջին բարևը տալու Տրիլբիին, որ նրա այցելութեան լուրն առնելով այնքան ոյժ է ստացել, որ հագնւելէ եկել ընդհանուրդահլիճումդի մասորելուներան։ Տեսարանը սրտաշարժ է։ Վերանորոգել են հին, ուրախկենցաղը։ Տրիլբիի մարմնի մասունքը նկարում են, իսկ Սւենգալին նրա խնդրանօք նւագում է դաշնամուրի վրայ իր սիրած երգը, որ առաջ չէր հասկանում Տրիլբին, իսկ այժմ ամեն մի հնչիւնը ըմբռնում է։ Աւանդում է հոգին Տրիլբին այդ ներդաշնակ խաղաղ անդորրութեան մէջ։ Գերեզմանատան զանգը տխուր տալիս են, Սւենգալին դադարում է նւագելուց, նա դուժում է սիրեցեալի մահը ընկերներին և ուժգին հարւածով վերջին ակկորդը տալով սրտի պայթումից մեռնում է և ինքը։

Տրիլբի դրաման շատ բեմական է, էֆէկտ կտորներով լի, ցնցող։ Տ. Իւրևա և պ. Լիւդւիգով կատարում են դերերը բնական։ Պիէսը, որ րոմանից է հանած, տեղ-տեղ բոլորովին փոխւած է, բայց չաջող։ Երկու անգամն էլ թատրոնըլիքն էրևւայսօր էլ կրկնւումէ։ Զատերին ֆանտաստիկ կարող է թւալ այս գրւածքը։ Բայց նա, որ հետևում է հոգեբանական դիտութեան և նրա ճիւղին, հիպնոտիզմի օր-օրի վրայ Եւրոպայում ընդարձակ դիրք բռնելուն, նրան օտարոտի և անբնական չի երեւալ այս գրւածքը, գուցէ մի փոքր միայն չափազանցացրած է։

—Դերասանուհի տ Մարտինովան իր բենեֆիսին դրել էր Զպաժինսկու Պитомка կոմեդիան. հեղինակը շատ թոյլ կերպով է մշակել իր վերցրած նիւթը։ Յարգելի դերասանուհին ստացաւ շատ ծաղիկներ և մի քանի թանգագին ընծաներ։

—

Հայ երգիչ պ. Ֆ. Ամիրջանեան, որ Մոսկւայի Կայսերական թատրոնի երգիչ է և ունեցել է յաջող դեբիւտներ, լսում ենք որ մտադիր է Թիֆլիսում մի կոնցերտ տալու։ Հետաքրքիր է լսել պ. Ամիրջանեանին և յոյս ունենք, որ մեր երաժշտասէր հասարակութիւնն էլ կրկամենայ իր հայրենակցի աջողութեան և առաջադիմութեան մրցման ունկնդիր լինել։

Խառն լուրեր

Ճրանսիայի դեսպանը կ. Պոլսում մի լուրջ ընդհարում ունեցաւ տաճիկ կառավարութեան հետ յունական հպատակներին իր հովանաւորութեան տակ առնելու մասին։ Ինչպէս յայտնի է, Ճրանսիան պիտի պաշտպանէր յոյն հպատակներին, սակայն սուլթանը այդ բանին ընդդիմացաւ եւ ստիպեցաւ Կամբոնին չեզ կանչել տալ եւ վերադարձնել իր վկայադիրները, եթէ նա պնդէր յոյներին պաշտպանելու գործում։ Հանուոտո իբրեւ հետեւս բաղաճագէս խոնարհից սուլթանի պահանջին եւ մերժեց պաշտպանել Կամբոնի առաջարկը։

— Յոյն-տաճկական խնդրի առիթով բանակցութիւնները շարունակւում են. այժմ նոր բարդութիւններ են առաջացել։ Գուլեստանը յայտնել է, որ իմը մերժում է պատերազմական տուգանք վճարելը եւ ստիպողական ուղղելը։ Այս հակառակութիւնները բանակցութեան ընթացքը երեւի կ'երկարացնեն։

—Տաճկաստանը շարունակում է իր պատերազմական պատրաստութիւնները։ Երկիւղ կայ,՞ որ Կրէտէի պատճառով անգլօ-ռուսական ընդհարում առաջանայ։

—Կրէտէի Աթէնք եկած ընդհանուր հիւպատոսը հաւատացնում է, որ Կրէտացիները մեծապէս են ազգային ժողով գումարել, ընտրել կղզու համար մանճակատար կառավարութիւն եւ յայտարարել Կրէտէի միացումը Յունաստանին հետ։

—Աթէնքում մեծերի յուզումները ըստպատճառի չափեր են ընդունում։ Ապատում է ապստների կողմից խռովութիւն։ Լսւում է, որ յունական բազմաժառանգը Աթէնք չի վերադառնայ, իսկ ոմն գնալն էլ չի յայտնի։ Էպիրոսի զօրեղի նախկին հրամանատարը յանձնւած է գինւորական դատարանին։ Նրան Աթէնք են բերել շղթայակապ եւ բանտարկել։ Նա կամեցել է բանտում անձնասպան լինել։

Ապագայ խռովութիւնների առաջն առնելու համար, Փալերմոյում պիրէում շրջում են օսմ պետութիւնների վեց շոգենաւեր։

—Դատարանը բննելով իտալական բազաւորի վրայ յարձակուղ Աչչիորիոյի գործը, դատապարտեց նրան ւեցամեայ տաժանակիր ազխատանքների եւ ուրիշ պատիժների։ Դատապարտեալը բննութեան ժամանակ իրան շատ անպատկառ էր պահում։

—Փոմպէյոսում տեղի ունեցած պատերազմում իտալական կամաւորները (գարիբալդիականները) մեծ հերոսութիւն են ցոյց տւել, այնպէս որ տաճիկները մի առ ժամանակ իրանց յաղթած էին համարում։ Ինչ էր մնացել Բ. Փարիբալդին գերի բնկնէր իր զօրագնդով, բայց իրանց առագաստաշարժութեամբ ազատեցին։ Կամաւորների պարագլուխ դեպուտատ Ձիպրիանիի դրութիւնը, որ ոտից ծանր վիրաւորւել էր, վատանում է։ Վիրաւորել է եւ Գարիբալդիի 17-ամեայ որդին։

Մեր պատկերները

Իտալական կեանքից. **Պոսսի ակւարէլներից.**

Հիասքանչ է Իտալիայի բնութիւնը, այնտեղ կեանքն եռում է բանաստեղծական աւիւնով։ Ահա հեռւից երևում է եկեղեցու գմբէթը, որ կարծես կախւած լինի գեղեցկանիստ քաղաքի վրայ. իսկ դաշտում տեսնում են իտալացի-հանապարհորդներ, որոնք յոգնածութիւնից ընկողմանել են և զրուցում են։ Եւ այգեղ իտալուհիները իրանց ներկայութիւնով լրացնում են կարծես այդ պատկերի շքեղութիւնը։

Տիպիքական են առհասարակ իտալացիները և նրանց կեանքը շնչում է հարաւային գեղեցկութեամբ։